ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» հոկտեմբերի 2016թ. N 93 - Ա

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «բ» ենթակետով, 2016 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացվող հիմնանորոգման և կառուցման աշխատանքների ավարտի կապակցությամբ ընդունման-հանձման աշխատանքներն իրականացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Կ. Դանիելյան)՝ ընդունող հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել կապալառու կազմակերպությունների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Արմավիրի տարածքային բաժնի, Արմավիրի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության, աշխատակիցներին (համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Մ.Քարտաշյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2016 թվականի հոկտեմբերի <<18>>-ի

N 93-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Դանիելյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Անդամներ՝ Ռ.Երվանդյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Ա.Հովհաննիսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Ն.Սարգսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտիվարչության կրթության բաժնի պետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ